ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 364 -Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով՝

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Աչաջրի Ակ» և «Գետահովիտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ներում 2019 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև հոկտեմբեր 23-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր, իրականացնել համապատասխանության աուդիտ հետևյալ կազմով՝

Անժելա Սիմոնյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Հերմինե Դավթյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Տավուշի մարզի «Աչաջրի Ակ» ՊՈԱԿ-ում 2017 թվականի, իսկ «Գետահովիտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում 2017 և 2018 թվականների ընթացքում իրականացված ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչի ժ/պ Արտեմ Ոսկանյանին:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

30.09.2019

X

30 սեպտեմբեր 2019թ.
ք. Իջևան